

ՈՒՐԱՐԻ ՏԸՀՉՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 22 Հոկտեմբեր 1976, Ս. Թարգմանչաց տօնի նախատօնակին, որ հանդիսաւորապէս պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Տաճարին մէջ, հանդիսապետ Գերջ. Տ. Շահէ Արքեպոս. Ամէժեան Ռւրար շնորհեց Ալեքս և Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարանի ընթացաւարտ Հինգերորդ դասարանի ութ սաներուն:

Ուրարակիր ութ այդ ուսանողներն են. Տիրացուներ Աւետիս Զաթալուսանեան, Գրիգոր Կիւլէսէրեան, Ենովք Պաշալեան, Խաչիկ Սիւյիթեան, Հըրաչ Քէշիշեան, Յակոր Տէմիքնեան, Յովհաննէս Պալեան և Ներէս Թաշճեան:



Վերատեսուչ Գերջ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս Աթէւեան և Փոխ-Տէսուչ Հոգէ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուղյարեան շրջապատուած նոր ուրարակիրներով:

Անոնք, Ս. Աթոռի հոգանիին տակ և Ժառանգաւորաց Վարժարանի աւանդապաշտ ու կրօնարոյր միջնորաբն մէջ ուսանած և մեծցած, փափաքցան ընդունիլ սուրբ ուրարք իրենց ուսերուն, իրք նշանակը այն քաղցր լուծին որ իրենցը պիտի ըլլայ ապագային, և որ պիտի յատկանշուի անյողողող հաւատարժութեամբ հանդէպ Հայաստաննեաց Ս. Եկեղեցիի Լուսաւորչաղիր զաւանանքին, և անսակարկ ծառայութեամբ նոյն այդ Եկեղեցիին և Հայ ժողովուրդին:

Թող Ամենակալ Տէրը անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի իր այդիին նուիրուին նոր և եռանդուն մշակներ: